


ԵՎԵՂԵՑԻ

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻ, ԹՈՐՈՆՏՈ
SAINT MARY ARMENIAN APOSTOLIC CHURCH, TORONTO
ԺԸ. ՏԱՐԻ, ԹԻԲ 11, 22 ՄԱՐՏ, 2020

ՀԱՆԳԻՍՏ՝ Տ. ՏԻՐԱՅՐ ԱՐՔ. ՓԱՆՈՍԵԱՆ



Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբանութիւնը սրտի դառն կակիծով կը գուժեն Կիլիկեան Միաբանութեան երէց անդամներէն Տ. ՏԻՐԱՅՐ ԱՐՔ. ՓԱՆՈՍԵԱՆԻ (1937-2020) վախճանումը, որ պատահեցաւ Զորեքչարթի, 18 Մարտ 2020-ի երեկոյեան: Աւագանի անունով Փանոս: Ծնած է Հալէպ (Սուրիա) 1937-ին: Նախնական կրթութիւնը ստացած է Հալէպի կրթասիրաց Ազգային Վարժարանին մէջ, եւ ապա 1961-ին՝ ընդունուած Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքը: 1963-ին ձեռնադրուած է սարկաւազ եւ 1965-ին՝ արեղայ, վերակոչուելով Տ. Տիրայր: 1967-ին ստացած է Վարդապետական աստիճան, որպէս աւարտաճառ ներկայացնելով «Համառօտ Պատմութիւն Հայ-Լատինական Յարաբերութեանց Սկիզբէն Մինչեւ 1382 Թուական», որ ապա հրատարակուած է: Համալսարանական ուսումը ստացած է Անգլիոյ մէջ, 1968-70, եւ ստացած է Leader of Christian Education վկայագիրը: 1995-ին ստացած է Ծայրագոյն Վարդապետութեան աստիճան: Եպիսկոպոսական

ձեռնադրութիւն եւ օծում ստացած է 1997-ին, իսկ արքութեան տիտղոս՝ 2010-ին:

1965-72 վարած է Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարի լուսարարապետի պաշտօնը:

1972-79 ծառայած է Ատրպատականի թեմէն ներս իբրեւ Կաթողիկոսական Փոխանորդ:

Վարած է ուսուցչական պաշտոն Դպրեվանքին եւ զանազան վարժարաններէ ներս: 1966-72 վարած է Հայ Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Վարժարաններու վարիչ տնօրէնի պաշտօնը եւ հինգ տարի հրատարակած է «Դրագարկ» տարեգիրքը: Մայրավանքին մէջ զանազան պաշտօններու կողքին ստանձնած է մատենադարանապետի պաշտօնը 1984-97, եւ նոյն պաշտօնը վերստանձնած՝ 2005-2019: 1998-ին վարած է Կաթողիկոսարանի տպարանի տեսուչի, իսկ 1999-2000՝ «Թռչնոց Բոյն»ի տեսչութեան պաշտօնները:

Հանգուցեալ սրբազանը եղած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հաւատարիմ, նուիրեալ եւ աշխատունակ միաբաններէն մէկը: Գիրն ու գրականութիւնը, յատկապէս գեղանկարչութիւնը մնայուն ներկայութիւն դարձած են իր կեանքին մէջ: Վերջին օծումը կատարուեցաւ Ուրբաթ 20 Մարտ, 2020-ի Անթիլասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ:

ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՅՆ ՕՐ ՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ

ՄԵՐ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԱԶՆԻՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Կ'ապրինք անբնական պայմաններու մէջ: Ներկայ տագնապին ստեղծած անորոշութիւնը, վախը եւ անձկութիւնը դարձած են ամէնօրեայ մտահոգութիւն՝ մեր անձնական, ընտանեկան, համայնքային ու ազգային կեանքէն ներս: Միշտ կ'աղօթեմ, որ Աստուած հեռացնէ այս չարիքը աշխարհէն, հիւանդներուն բժշկութիւն պարգեւէ եւ մեր զաւակները պահէ անվտանգ Այս դժուար պայմաններուն մէջ յատկապէս, եկեղեցին պէտք է իր ժողովուրդին հետ ըլլայ: Եկեղեցին որպէս ծառայութիւն, առաքելութիւն եւ երկնային արժէքներու աղբիւր, հարկ է տանիլ մեր ժողովուրդին: Արդ, հայրաբար կը թելադրենք մեր հոգեւորականներուն.-

✓ Աղօթեցէք, մի՛շտ աղօթեցէք համայն մարդկութեան եւ մեր ժողովուրդին համար, միաժամանակ մեր ժողովուրդին կոչ ուղղեցէք աղօթելու հաւատքով ու յոյսով:

✓ Ընկերային ցանցերու ճամբով միշտ կապի մէջ եղէք ձեր թեմի ու ծուխի ժողովուրդի զաւակներուն հետ՝ մօտէն հետեւելով անոնց մտահոգութիւններուն, բաժնելով անոնց ցաւը եւ յոյս ներշնչելով անոնց:

✓ Յորդորեցէք մեր զաւակները, որ իրարու օգնեն՝ իրարու համար աղօթելով, եւ անհրաժեշտութեան պարագային ընկերային ու նիւթական աջակցութիւն ընծայելով:

✓ Յիշեցուցէք մեր ծնողներուն, որ իրենց ընտանեկան յարկին տակ յատուկ ուշադրութիւն ընծայեն իրենց զաւակներուն հոգեւոր ու հայեցի դաստիարակութեան:

✓ Գոհունակութեամբ կ'ուզեմ հաստատել, որ համարեա բոլոր մեր եկեղեցիները, սկսած են իրենց թեմերու ու ծուխերու ժողովուրդը հաղորդ դարձնել մեր եկեղեցական արարողութիւններուն՝ ընկերային ցանցերու ճամբով: Շարունակեցէ՛ք այս կարեւոր նախաձեռնութիւնը:

✓ Անհրաժեշտ է, որ զանազան շրջաններու մէջ հաստատուած մեր զաւակները կանոնաւոր կերպով հետեւին տուեալ երկրի պետական կառոյցներուն կողմէ կատարուած թելադրութիւններուն եւ ցուցմունքներուն:

Հայրական սիրով եւ օրհնութեամբ,
Աղօթարար՝
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
20 Մարտ 2020
Անթիլիաս, Լիբանան

ԼՈՒՐԵՐ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ

ԵՐԿՈՒ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐՈՒ ՈՐՈՇՈՒՄՈՎ ՄԻՆՉԵՒ ԱԻԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ 9 ԱՊՐԻԼ ԲՈԼՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԷՆ ՆԵՐՍ ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳԸ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏԵՂԻ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՆ ԱՌԱՆՑ ՀԱԻԱՏԱՑԵԱԼՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ



Այս առաւօտ, երկու վեհափառ Հայրապետները՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս, խորհրդակցութիւն մը ունեցան Քորոնավիրուսի ստեղծած համաճարակին եւ մեր ժողովուրդի կեանքէն ներս անոր յառաջացուցած հետեւանքներուն մասին:

Երեկոյեան վեհափառ Հայրապետը հանդիպում մը ունեցաւ Անթիլիասի Մայրավանքի եպիսկոպոսներուն հետ: Արդարեւ, մեկնելով մեր ժողովուրդի անվտանգութեան նկատմամբ մեր ունեցած նախանձախնդրութենէն, միաժամանակ հետեւելով բժիշկներու ու մասնագէտներու թելադրութիւններուն, որոշուեցաւ որ մինչեւ Աւագ Հինգշաբթի 9 Ապրիլ մեր եկեղեցիներէն ներս Սուրբ եւ Անմահ Պատարագը մատուցուի եւ բոլոր եկեղեցական արարողութիւնները տեղի ունենան առանց հաւատացեալներու ներկայութեան: Նոյն որոշումը առնուեցաւ նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան կողմէ:

Հետեւաբար, ջերմօրէն կը թելադրենք մեր հաւատացեալ ժողովուրդին.-

1) Անթիլիասի ուխտի օրը՝ Կիրակի, 29 Մարտ 2020-ի յետմիջօրէին միայն հաւատացեալներ առանձնաբար եւ իրենց ընտանիքի անդամներով մօտենան Ս. Խորանին՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի Սուրբ Աջին օրհնութիւնը ստանալու: Նոյնպէս Ծաղկազարդի օրը՝ Կիրակի, 5 Ապրիլ 2020-ի յետմիջօրէին միայն եկեղեցի երթան՝ ստանալու օրհնուած ձիթենիի ճիւղեր:

2) Հոգեհանգիստները բնական կերպով պիտի կատարուին՝ միշտ առանց սգակիրներու ու հաւատացեալներու ներկայութեան: Անհրաժեշտ է այս գծով նախապէս տեղեակ պահել եկեղեցւոյ պատկան մարմինները կամ քահանայ հայրերը:

3) Թելադրելի է որ մեր ժողովուրդի զաւակները ընկերային ցանցերու, հեռատեսիլներու եւ ձայնասփիւռներու ճամբով հետեւին սուրբ եւ անմահ պատարագին:

4) Բնականաբար, մեր եկեղեցիները միշտ բաց պիտի մնան հաւատացեալներու առջեւ, որոնք օրուան ընթացքին կ'ուզեն եկեղեցի գալ խոկումի ու աղօթքի համար:

5) Մկրտութեան եւ թաղման արարողութիւնները կատարել սահմանափակ թիւով անձերու ներկայութեան:

Վստահ ենք որ մեր ժողովուրդի զաւակները հասկացողութիւն եւ պատասխանատու վերաբերում պիտի ցուցաբերեն վերոյիշեալ թելադրութիւններուն գծով: Ինչպէս Վեհափառ Հայրապետը մեր ժողովուրդին ուղղած իր հայրական պատգամին մէջ ըսաւ.-

Աղօթքը պէտք է դառնայ մղիչ ոյժը մեր կեանքին, մեր մտածումներուն ու գործերուն: Հաւատքով շաղախուած աղօթքն է, որ մեզի հոգեկան քաջութիւն կու տայ դիմագրաւելու կեանքի բոլոր չարիքները: Մեր Տէրը Յիսուս Քրիստոս ըսաւ՝ «Ինչ որ աղօթքով խնդրէք, հաւատացէք որ պիտի ստանաք եւ ձեր խնդրանքը պիտի տրուի ձեզի» (Մր 11.24): Սիրելի հայորդիներ, «միշտ աղօթեցէ՛ք, որ արժանի ըլլաք այս պատահելիքներէն ազատելու» Աստուծոյ Որդւոյն խոստումին համաձայն: Հետեւաբար, եկէ՛ք դառնանք Քրիստոսի ու Սաղմոսին աղօթասաց բառերով ըսենք.- Դո՛ւն ես իմ յոյսը, Տէր, ... ինձմէ հեռու մի մնար, փութա՛, ինձի օգնութեան հասիր (71. 5, 12):

Ազգային Կեդրոնական Վարչութեան Կրօնական Ժողով
16 Մարտ 2020
Անթիլիաս

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՐԱԿԱՆ ԿՈՉԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

Սիրելի հայորդիներ,

Ցնցուած է ողջ աշխարհը: Տագնապը, խուճապը ու անորոշութիւնը դարձած են տիրական ներկայութիւն բոլոր երկրամասերէն եւ բոլոր ազգերու կեանքէն ներս: Գիտնականներ, բժիշկներ, պետական թէ կրօնական պատասխանատուներ, իւրաքանչիւրը իր մարզէն ներս, կը փորձեն կասեցնել Քորոնավիրուս կոչուող ժահրին պատճառած համաճարակը: Սակայն, հակառակ տարուող հետեւողական աշխատանքներուն, փաստօրէն, համաճարակը սարսափ ու մահ կը սփռէ ամէն տեղ:

Մենք, խորապէս մտահոգ ենք մեր ժողովուրդի գաւակներուն նկատմամբ եւ մօտէն կը հետեւինք Հայաստանի եւ Սփիւռքի գաղութներէն ներս ստեղծուած մթնոլորտին: Իր դարաւոր պատմութեան ընթացքին ահաւոր փոթորիկներէ անցած մեր ժողովուրդը դարձեալ կը գտնուի նոր փորձանքի մը դիմաց: Հարկ է ըլլալ իրապաշտ, խոհեմ եւ զգոյշ: Հարկ է անհատական եւ հաւաքական ճիշդ ու պատասխանատու մօտեցումով դիմագրաւել այս վտանգալից տագնապը:

Արդ, հայրական կոչ կ'ուղղենք մեր սիրելի գաւակներուն.-

1) Իւրաքանչիւր հայ, ընտանիք կամ համայնք, իւրաքանչիւրը իր անմիջական ծիրէն ներս, բարձրագոյն աստիճանի լրջութեամբ, զգուշաւորութեամբ ու պատասխանատուութեամբ պէտք է մօտենայ համայն մարդկութիւնը ու նաեւ մեր ժողովուրդը յուզող ներկայ կացութեան:

2) Տեղական թէ միջազգային լրատուական ցանցերը մնայուն կերպով լայն տեղեկութիւններ կը փոխանցեն համաճարակին մասին ու մանաւանդ անհրաժեշտ լուսաբանութիւն եւ ցուցմունք կու տան՝ զայն յաղթահարելու գործնական կարելիութիւններուն ու միջոցներուն գծով: Անհրաժեշտ է մօտէն հետեւիլ տրուած մասնագիտական բացատրութիւններուն եւ առաւելագոյն չափով գործադրել զանոնք մեր անհատական, ընտանեկան թէ հաւաքական կեանքին մէջ:

3) Բժիշկներուն կողմէ կատարուած զգուշաւորութեան կոչին մէջ հիմնականը՝ հեռու մնալ է Ֆիզիքական ու ընկերային շփումներէ, յարաբերութիւններէ եւ հաւաքներէ: Մեր անձին, ընտանիքին, համայնքին,

ազգին եւ բոլորին առողջութեան համար անհրաժեշտ է յատուկ կարեւորութեամբ նկատի ունենալ այս պարագան: Բոլոր մասնագէտներու համոզումով, յիշեալ գործնական միջոցներով միայն կարելի է կասեցնել ներկայ համաճարակին տարածումը:

Սակայն, աղօթքը պէտք է դառնայ մղիչ ուժը մեր կեանքին, մեր մտածումներուն ու գործերուն: Հաւատքով շաղախուած աղօթքն է, որ մեզի հոգեկան քաջութիւն կու տայ դիմագրաւելու կեանքի բոլոր չարերն ու չարիքները: Մեր Տէրը Յիսուս Քրիստոս ըսաւ՝ «Ինչ որ աղօթքով խնդրէք, հաւատացէք որ պիտի ստանաք եւ ձեր խնդրանքը պիտի տրուի ձեզի» (Մր 11.24): Սիրելի հայորդիներ, «Միշտ աղօթեցէ՛ք, որ արժանի ըլլաք այս պատահելիքներէն ազատելու», Աստուծոյ որդւոյն խոստումին համաձայն:

Հետեւաբար, եկէ՛ք դառնանք Քրիստոսին ու Սաղմոսին աղօթասաց բառերով ըսենք.- դո՛ւն ես իմ յոյսը, Տէր, ... ինձմէ հեռու մի մնար, փութա՛, ինծի օգնութեան հասիր (71. 5,12): Այս հաւատքով ու յոյսով, եկէք միա՛սնաբար աղօթենք մեր եկեղեցւոյ աղօթքին պարզ, սակայն խորունկ բառերով.-

«Ո՛վ Տէր, մեր Աստուածը, քու ժողովուրդէդ փարատէ՛ ցաւերը եւ բժշկէ՛ հիւանդութիւնները. կատարեալ առողջութիւն շնորհէ բոլորին՝ քու ամենայաղթ Խաչիդ նշանով, որով մարդոց տկարութիւնները քու վրադ առիր եւ դատապարտեցիր կեանքի ու փրկութեան թշնամին: Դո՛ւն ես մեր կեանքն ու փրկութիւնը, բարերա՛ր եւ բազումողորմ Աստուած. միայն դո՛ւն կրնաս մեր մեղքերը ներել եւ ցաւերն ու հիւանդութիւնները վանել մեզմէ, որովհետեւ քեզի ծանօթ են մեր կարիքները: Ո՛վ բարիքներու Պարգեւիչ, իւրաքանչիւրին կարիքներուն համաձայն՝ քու առատ ողորմութի՛ւնդ պարգեւէ արարածներուդ, որոնք միշտ կը փառաւորեն ու կ'օրհնաբանեն քեզ ամենասո՛ւրբ Երրորդութիւն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն»:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Ո՛վ Տէր, իմ Աստուածս, քեզի՛ կ'ապաւինիմ. Փրկէ՛ զիս իմ բոլոր հալածիչներէս, եւ ազատէ՛ զիս. Որպէսզի իմ անձս չբեկտայ առիւծի մը պէս, Որ կը յօշոտէ, եւ ոչ մէկ ազատող կ'ըլլայ:

Սաղմոս 7:1-2

ՀՈՎԻԻԻՆ ՉԱՅՆԸ

Հոգ. Տ. ՎԱՐՊԱՆ ՎՐՊ. ԹԱՇՃԵԱՆ, ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻ
ԱՐԺ. Տ. ՏԱԹԵԻ ԱԻ. ՔՀՄ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ, ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻ

ԴԱՏԱԻՈՐ ԿԻՐԱԿԻ (ՂԿ 17.20-18.14)

Քրիստոս այս առակով կը ներկայացնէ իր Երկրորդ Գալստեան հանգամանքները եւ անոնց համեմատութիւնը կը կատարէ Նոյի ու Ղովտի օրերուն հետ:

Ի՞նչ կացութիւն պիտի ստեղծուի Անոր Երկրորդ Գալստեան պահուն:

Մեր Տիրոջ՝ Յիսուսի քարոզները կ'ընդգրկեն խորհուրդներ, որոնք ժողովուրդին կը մեկնուին կամ կը բացայայտուին առակներով՝ մարգարէին խօսքին համաձայն. «Առակներով պիտի բանամ իմ բերանս ու աշխարհի սկիզբէն ի վեր ծածկուած բաները յառաջ պիտի բերեմ» (Սղ 78.2):

Աւետարանական այս հատուածով Քրիստոս պատկերացում մը կու տայ Աստուծոյ Թագաւորութեան խորհուրդին եւ իր Երկրորդ գալստեանի ժամանակին մասին, բնութեան օրէնքներէն օրինակ վերցնելով:

Յիսուսի Թագաւորութեան յայտնութիւնը փայլակի նման պիտի ըլլայ, այդ կը նմանցուի Նոյի օրերուն, երբ մարդոց կեանքը բնականոն կը կարծուէր. «Կուտէին, կը խմէին, այր կամ կին կ'առնէին» կամ ինչպէս Ղովտի օրերուն պատահեցաւ կրկին նոյն ձեւով. «Կ'ուտէին կը խմէին, կը ցանէին, կը տնկէին» եւ յանկարծ ջրհեղեղ կամ կրակ ու ծծումբ տեղաց եւ մարդիք կորսուեցան: (ՂԿ 17.28-29):

Օրուան խորհրդածութեան նիւթը՝ առանց ձանձրանալու աղօթելն է, որուն շարժառիթը կը հանդիսանայ Աստուծոյ Թագաւորութեան յանկարծակի յայտնութիւնը,

Քրիստոսի Երկրորդ Գալստեանով:

Առակին մէջի Դատաւորը Տէրն է, որ այս պարագային կը խոնարհի մարդոցմէ չամցող եւ Աստուծմէ չվախեցող կերպարին առջեւ, ցոյց տալու համար որ Ան իր գործերուն մէջ անկախ է, մարդոցմէ չի կաշառուիր եւ անոնց կամքին

համեմատ չի շարժիր, ինչպէս նաեւ իրմէ վեր մէկը չկայ որմէ կախեալ է եւ կամ գործելու համար կարծիք կը հարցնէ:

Աստուած խոստացաւ իրեն հաւատացողները Երկնքի Թագաւորութեան արժանացնել, ասիկայ բոլոր արդարներուն իրաւունքն է, որուն դէմ կ'աշխատի միշտ Սատանան, իր աշխարհային ցանկութիւններու հմայքով իրաւագրկելու բոլորը Աստուծոյ կամքը կատարողներուն: Բոլոր հաւատացեալները աղօթքի ճամբով կը հաղորդակցին Աստուծոյ հետ եւ կը պայքարին Աստուծոյ հակառակ չար ուժերուն դէմ: Այն չար էակներուն՝ որոնք կը ցանկան արդարները յաւիտենական կորուստի առաջնորդել:

Դատաւորի դրուագէն ետք Յիսուս կը պատմէ Փարիսեցիին եւ Մաքսաւորին առակը. (Ղկ 18.9-14), ուր կը խօսի աղօթքի մասին, յատկապէս՝ Աստուծոյ հաճելի եւ ընդունելի աղօթքի պայմաններու մասին:

Փարիսեցին եւ Մաքսաւորը տաճար կ'երթան աղօթելու: Աստուծոյ համար ո՞ր աղօթելը կարեւոր չէ, կարեւորը ինչպէ՞ս եւ ի՞նչ կ'աղօթենք: Երեւոյթները կարեւոր չեն: Աստուած երեւոյթներով չէ որ կ'ընդունի կամ կը մերժէ մարդոց աղօթքները: Աստուած շատ լաւ գիտէ իւրաքանչիւրիս ներաշխարհը, եւ իրեն համար հաւատքով, եւ մաքուր սրտով կատարուած աղօթքն է որ հաճելի է եւ լսելի:

Վերջապէս Տէրը կ'ընդունի Մաքսաւորին աղօթքը որովհետեւ խոնարհաբար, հաւատքով եւ ամենայան անկեղծութեամբ աղօթեց, իսկ Փարիսեցիինը կը մերժէ՝ որովհետեւ, հպարտութեամբ եւ այլամերժութեամբ կ'աղօթէր:

Ասուած մեզ իւրաքանչիւրս, մեր ասպարէզին մէջ դատաւոր կարգած է, հետեւաբար պարտաւոր ենք, Քրիստոսի օրինակին հետեւելով, ինչպէս նաեւ Աստուծոյ Սուրբ երկիւղը ունենալով մեր սրտերուն մէջ, գործենք՝ մաքրութեամբ, սրբութեամբ եւ արդարութեամբ:

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ. «Խնդեցէք Աստուծմէ եւ պիտի տայ ձեզի, փնտռեցէք եւ պիտի գտնէք, բաղխեցէք եւ պիտի բացուի ձեզի» (Մտ 7.7):

Դատաւորի Կիրակին իր գոյգ դրուագներու խորհուրդով թո՛ղ լուսաւորէ մեր ուղին, որպէսզի առանց յուսահատութեան, անկեղծ եւ մաքուր հոգիով աղօթենք եւ միշտ աղօթենք առանց ձանձրանալու:

Տաթեւ Ա. Քհնյ. Միքայէլեան

ՍՐԲՈՑ ՔԱՌԱՄՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ

ՀԱՒԱՏՔԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

3/21/2020

4-րդ դարը հանդիսացաւ մարդոց հոգեկան յեղափոխութեան այն դարաշրջանը,

Երբ քրիստոնեաներ ազատագրուած էին, նախորդ դարերու հալածանքներէն: Յ13 թուականին Արեւմուտքէն Կոստանդիանոս եւ Արեւելքէն Լիկիանոս կայսրերու հռչակած «Միլան»ի նշանաւոր հրովարտակը հրապարակուեցաւ, քրիստոնեաներ կրօնական ազատութիւն վայելեցին: Այդ շրջանին առաքելական եւ ընդհանրական եկեղեցին ազատօրէն կը գործէր ու կը փառաւորէր Աստուած եւ կը մեծարէր իր նահատակները: Սակայն այս խաբուսիկ ազատութիւնը երկար չտեւեր, կրկին հալածանքներ կը շղթայագերծուին քրիստոնեաներու դէմ:

Այդ ժամանակամիջոցին էր որ, կը մարտիրոսանան Սբաստիոյ մէջ քառասուն մանուկները: Վերջիններս, Արեւելքի Կապադովկիոյ նահանգին մէջ գինուորական ծառայութեան կոչուած քառասուն երիտասարդներ էին, բանակային բարձրաստիճան սպաներ: Հալածանքի բովը հասած էր Կապադովկիա: Կոստանդիանոսի հակառակ քաղաքականութիւն վարող Լիկիանոս կայսրը՝ կը հրամայէր ատեանի մէջ հարցուփորձել քաղաքի բոլոր զօրավարները եւ անոնք որոնք յանձն չառնէին աստուածներուն զոհ մատուցել՝ մերկացնել զանոնք իշխանական պատիւէն եւ ստիպել գիրենք դառնալ հեթանոսութեան. մերժելու պարագային մահուան դատապարտել:

Այս միջոցին, քառասուն զօրականները կը գտնուէին Սբաստիա, ուր գինուորական դատաւորին՝ Ագրիկողայոսի կը փոխանցուի հարցաքննութենէն ետք ձերբակալել զանոնք, որովհետեւ անոնք անդրդուելի կը մնան իրենց քրիստոնէական հաւատքին մէջ: Քառասունները, այս անգամ, գիրար առաւել եւս կը գոտեպնդեն իրենց հաւատքին եւ եղբայրական միասնակամ ոգիով հաւատարիմ մնալու Քրիստոսի եւ ի գին իրենց արեան՝ նահատակուելու, քաջ գիտենալով Քրիստոսի պատուէրը, որ կ'ըսէ. «Հաւատարիմ եղիր ինծի, նույնիսկ եթէ մեռնիլ պէտք է, եւ ես քեզի կեանքի պսակը պիտի տամ» (Յյտ 2.10), «Ով՞ որ մարդոց առջեւ դաւանի թէ ինծի կը հետեւի, ես ալ զայն ինծի հետեւորդ պիտի դաւանիմ Հօրս դիմաց, որ երկինքի մէջ է» (Մտ 10.32):

Միահամուռ հաստատակամութեամբ, հաւատքի քառասուն ախոյանները շղթայագերծեցին չարակամներու բոլոր տեսակի փորձութիւնները՝ դատավարութիւն, բանտարկութիւն, չարչարանք...: Հարցաքննողներ նուաճուած անոնց կամքի եւ հաւատքի տոկունութենէն, զանոնք ձմրան եղանակի

ցուրտին, մերկ վիճակով լիճին մէջ ձգեցին: Անոնց մարմինները հետզհետէ ճարճատեցան ջուրին մէջ: Իրենցմէ մէկը տկարանալով դուրս կ'ելլէ լիճէն, կ'երթայ յատուկէն եւ դիտմամբ պատրաստուած բաղնիք, տաք ջուրի մէջ իր Ֆիզիքական մարմինը փրկելու, բայց յանկարծական ցուրտէն դէպի ջերմութիւն անցըր՝ իր մահուան պատճառ կը դառնայ: Քառասուն թիւը կ'ամբողջանայ պահակ զինուորի մը կողմէ, որ ականատես կը դառնայ երկնային լոյսին եւ այլ աստուածային նշաններու:

Սկզբնական դարերու հերոսները մղեցին իրենց բարի պատերազմը եւ յաղթեցին աշխարհին: Այսօր մենք եւս պարտինք նոյն հաւատքով տողորուած ներբողենք Սրբոց Քառասնից Մանկանց նահատակները Ս. Ներսէս Շնորհալիի բառերով. «Ո՛վ պանծալի նահատակներ, երկնաւոր Հօր սիրելիներ, որ Քրիստոսի հետ մկրտուեցաք ձեր արիւնով, Խաչի մահը յանձն առնելով: Տիրող քով բարեխօսեցէ՛ք եկեղեցւոյ զաւակներուս համար»: Ամէն:

Համադրեց՝
Տաթեւ
Ա. Քհնյ. Միքայէլեան

ՄԻՋԻՆՔ



«ՄԻՋԻՆՔ» բառը եպեղեզգիական յԱՏՈՒԿ ԻՄԱՍՏ ՉՈՒՒԻ, ԱՅԼ ՊԱՐԶԱՊԷԱ ԿՐ յԻՇԵՅՆԷ մեծ որ բառաստեղծ ՊԱՇՏՅՈՂՈՒԹԵԱՆ ԿԻՍՈՒՄ ՀԱՍԱՐԷ. ԵՒ ԱՄԻԿԱ ԱՌԻԹ մըն է բնւելոյ մեր ԱՆՁԵՐԸ ԵՒ ՏԵԱՆԵԼՈՒ ԹԷ Ի՛ՆՁՊԷԱ ԱՆՅՈՒԹԻՆԷ բառաստեղծ ՊԱՇՏՅՈՂՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԷՐԸ, ԵՒ ԹԷ Ի՛ՆՁՊԷԱ ԿՐԱՆԷ ԱՆՅՆԵԼ ԵՐԿՐՈՐԴ ԿԷՐԸ: ՄԻՋԻՆՔԸ ԱՌԻԹ մըն է, մՏԱԾԵԼՈՒ ԹԷ Ի՛ՆՁ ԸՐԻՆԷ բառաստեղծ ՊԱՇՏՅՈՂՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԻՍՈՒՄ՝ ՈՐ ՊԷՏԷ ՉԷ ԸՆԵԼ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍՈՒՄ, ԵՒ Ի՛ՆՁ ՉՐԻՆԷ՝ ՈՐ ՊԷՏԷ Է ԸՆԵԼ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍՈՒՄ:

ՄԻՋԻՆՔԻ ԱՌԻԹՈՎ ՉՈՐԱ մՏԱԾՈՒՄԵՐ ԿՐ ԲԱԺԱՆԷՐ ՁԵՐ ՀԵՏ.-

1) ՍՈՎՈՐԱԲԱՐ ՀԱՄԱՏՅԵԱԼՆԵՐԸ բառաստեղծ ՊԱՇՏՅՈՂՈՒԹԵԱՆ ԿՐ սԿԱԻՆ մեծ ԽԱՆԴԱԿԱՌՈՒԹԵԱՐԸ, ԱՐՏԻ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՐԸ, ՎԱՌ յՈՅԱՌՎ ՈՒ ԳԵՂԵՅԻԿ ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՄԻՆԵՐՈՎ. ԲԱՅՅ ԺԱՄԱՆԱԿԻ ԸՆԹԱՅԻՆ ԵՒ ԱՎԽԲԱՆ մԻՋԻՆՔԸ, ԱՆՈՆՅ ԽԱՆԴԱԿԱՌՈՒԹԻՒՄԻՆԸ ԿՐ սԿԱԻ ԱՌԱՋԻԼ, ԱՐՏԻ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՄԻՆԸ ԿՐ ՉԲԱՆԱՅ, ՀԱՄԱՏԵՐ ԿՐ ԿՈՐԱՆՅԱԷ ԻՐ ՁԵՐԱԵՌԱԿՈՒԹԻՒՄԻՆԸ, ԵՒ յՈՅԱՆ ՈՒ ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՄԻՆԸ ԿՐ ԱՕՈՐԱՆԱՆ: ՄԻՋԻՆՔԸ ԿՈՒ ԳԱՅ ՅՆՅԵԼՈՒ ՀԱՄԱՏՅԵԱԼՆԵՐԸ ԵՒ յԻՇԵՅՆԵԼՈՒ ԱՆՈՆՅ ՈՐ ԲԱՌԱՍՏՈՐԵԱՅ ՊԱՇՏՅՈՒԹԻՒՄԻՆԸ ՀԱՍԱԾ Է ԻՐ ԿԻՍՈՒՄ, ՈՒՄՏԻ ԱՆԻԿԱ ԽԹԱՆ մը ԿՐ դԱՌՆԱՅ

ՀԱՄԱՏՅԵԱԼՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՐ ԳՏՆԵՂՈՒ ԻՐԵՆՔ ԶԻՐԵՆՔ, ԵՒ ՎԵՐԱԿԱՆԳՆԵՂՈՒ ԻՐԵՆՑ ԱՉ ԽԱՆԴԱԿԱՌՈՒԹԻՒՆ, ԱՐՏԻ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՄՆ ՈՒ ՎԱՌ յՈՅԱՐ:

Միջինք, ՀԵՏԵԽՔԱՐ, ԲԱՌԱՍՆՈՐԵԱՅ ՊԱՀԵՅՈՂՈՒԹԵԱՆ ԿԻՍՈՒՄ ԱԵՐ ՈՒԺԵՐՆ ՈՒ ԿԱՄՔՆ ՊՐԿԵՂՈՒ ԱՌԻՑ ԱՐԱ Է: Միջինքն ՊԷՏՔ Է ԲԱՆԵՆՔ ԱԵՐ ԱՆՁԵՐԸ:

Եթէ լա՛կ ԿԵՐՊՈՎ ԱԿԱՆՔ ԲԱՌԱՍՆՈՐԵԱՅ ՊԱՀԵՅՈՂՈՒԹԵԱՆ ԲՈՅՅ ԺԱՄԱՆԱԿԻ ԸՆԹԱՅԵՐՆ ԹՈՒՎԱՆՔ, Միջինքն ՊԷՏՔ Է ԱՌԻՑ ԴԱՐՁՆԵՆՔ ՎԵՐԱՊԱՀԵՂՈՒ ԱԵՐ ԿԱՄՔՆ:

Եթէ ԲԱՌԱՍՆՈՐԵԱՅ ՊԱՀԵՅՈՂՈՒԹԻՒՄՆ ԱԿԱՆՔ ԶԵՐՄԵՌԱՆԴ ԱՊՈԹՔՈՎ ԲԱՅՅ յԵՏՈՅ ՊԱՂԵՅԱՒ ԱԵՐ ԱՊՈԹԱԿԱՆ ԿԵԱՆՔ՝ Միջինքն ԱՌԻՑՈՎ ՊԷՏՔ Է ՎԵՐԱԾԱՐԾԵՆՔ ԱԵՐ ԱՐՏԻՄ ԱՉ ԱՊՈԹՔԻ ԿՐԱԿԱՐ:

Եթէ ԲԱՌԱՍՆՈՐԵԱՅ ՊԱՀԵՅՈՂՈՒԹԻՒՄՆ ԱԿԱՆՔ ԱԵՆՔ ԶԱՄԵՉ ՀԵՌՈՒ ՊԱՀԵՂՈՎ ԱԵՂՔԷՆ ԲԱՅՅ ԺԱՄԱՆԱԿԻ ԸՆԹԱՅԵՐՆ ԴԱՐՁԱՆՔ ԱԵՂՔԷՆ՝ Միջինքն ԱՌԻՑՈՎ ՊԷՏՔ Է ՈՐՈՇԵՆՔ ՎԵՐԱՏԻՆ ՀԵՌԱՆԱՂ ԱԵՂՔԷՆ:

Եթէ ԲԱՌԱՍՆՈՐԵԱՅ ՊԱՀԵՅՈՂՈՒԹԻՒՄՆ ԱԿԱՆՔ ԱՂՔԱՏԻՄ ՕԳՆԵՂՈՎ ԵՒ յԵՏՈՅ ԱՊ ՕԳՆՈՒԹԻՒՄՆ ԱՍՏԱՐԵՂՈՒ ԶՂՁԱՆՔ՝ Միջինքն ՊԷՏՔ Է ԱՌԻՑ ԴԱՐՁՆԵՆՔ ԱԵՐ ՈՒՇԱՊՐՈՒԹԻՒՄՆ ՎԵՐԱՏԻՄ ԴԱՐՁՆԵՂՈՒ ԴԷՊՐ ԱՂՔԱՐ:

2) ՀԱՏԵՐ ԲԱՌԱՍՆՈՐԵԱՅ ՊԱՀԵՅՈՂՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՅԵՐՆ ԿՐ ՀԱՆԴԻՊԻՄՈՒ ՓՈՐՁՈՒԹԻՒՄՆԵՐՈՒ ԱՊ ՓՈՐՁՈՒԹԻՒՄՆԵՐՈՒ ԿՐԱՆ ՀԱՄԱՔԻ ԾԱՊՐԱԾՈՒ ԱՐԻԿԿԱՐ ԸՂՂԱՂ, ԵՒ ՈՐՈՇՔ ԿՐԱՆ ՊԱՏՃԱՌ ԴԱՌՆԱՂ ԱԵՐ ՊԱՀԵՅՈՂՈՒԹԵԱՆ ԿԱՍԵՅԱՆ: Միջինքն ԱՌԻՑ Է յԱՂԹԵՂՈՒ ԵՄԱՆ ՓՈՐՁՈՒԹԵԱՆՅ ԵՒ ՀԱՍԱՏԱՏԱԿԱԾՈՐԷՆ ՇԱՐՈՒՄԱԿԵՂՈՒ ԲԱՌԱՍՆՈՐԵԱՅ ՊԱՀԵՅՈՂՈՒԹԵԱՆ ԼԵՌՆ ԲԱՐՁՐԱՆԱՂՈՒ ԱՇԽԱՏԱՆՔ:

3) ԿԱՆ ՀԱՄԱՏՅԵԱԼՆԵՐ ԵՐԵՆՔ ԲԱՌԱՍՆՈՐԵԱՅ ՊԱՀԵՅՈՂՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍՈՒՄ ԱՌԱՅՆ ՊԱՀՔ ԿՐ ԲՈՆԵՆ: Միջինքն ԱՌԻՑ ԱՐԱ Է ԱՊՊՐԻՍԻՆԵՐՈՒՄՆ՝ ԳԻՏԱՂՈՒ ՈՐ ԱՐԻՔՆ ՀԱՍԵՐ ԵՆ ԲԱՌԱՍՆՈՐԵԱՅ ՊԱՀԵՅՈՂՈՒԹԵԱՆ ԿԻՍՈՒՄ, ՈՐՊԷԱԶԻ ԱԿԱՐՆ ՊԱՀԵՅՈՂՈՒԹԵԱՆ:

ՀԵՏԵԻՆՑԻՔ ՄԵԶԻ ՈՒՂԻՂ ԵԹԵՐՈՎ

Կրնաք հետեւիլ եկեղեցական մեր բոլոր արարողութիւններուն, դիմատետրի հետեւեալ հասցէով՝



Follow us all of our weekly services on live stream

www.facebook.com/stmarytoronto

ԵԿԷՔ ՄԻԱՍԻՆ ԱՂՕԹԵՆՔ

Աղօթքը մարդու հոգիէն ու սրտէն բխած գոհութիւն է, երախտագիտութիւն է ու աղաչանք՝ ուղղուած Աստուծոյ:

Երբ աղօթքը շաղախուած է հաւատքով ու յոյսով, կը դառնայ կենդանի յարաբերութիւն մարդու եւ Աստուծոյ, զաւակի եւ Հօր միջեւ:

Եկէք, սիրելի հայորդիներ, միասին աղօթենք ամէն գիշեր անկողին մտնելէ առաջ, որպէսզի Աստուած հիւանդներուն առողջութիւն պարգեւէ եւ ամէն տեսակ չարիք հեռացնէ աշխարհէն:
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ



Prayer is an expression of thanks and gratitude to God.

When prayer is done in faith and hope, it becomes a living relationship between human being and God, son and Father.

In these times of tribulation, join me in prayer. Let us pray every night before going to bed, for those affected by coronavirus.

May God take away all sorts of evil from the world and grant us peace and joy.

HIS HOLINESS ARAM I

SAINT MARY ARMENIAN APOSTOLIC CHURCH

45 Hallcrown Place | Toronto, ON., | M2J 4Y4

Office: (416) 493-8122 | Fax: (416) 493-8265

stmaryarmchurch@yahoo.com | www.stmarytoronto.com